հիւրերը Տեղապահ սրբազանի, Մեսրոպ, Եղիշէ և այլ միաբանների առաջնորդութեամբ այցելեցին Մայր Աթոռի թանգարանը, մատենադարանը, լճի ափը, տպարանը և ճեմարանը։ Ճեմարանի հանդիսարանում Մեսրոպ վարդապետը մի քանի խօսքով բարի գալուստ մաղթեց փոխարքային որից յետոյ Տ. Փոխարքան մի քանի խօսքով գոհունակութիւն յայտնեց։ Աշակերտները երգեցին «Տէր, կեցո՛ զԿայսրն»։ Ճեմարանի ննջարան, դրադարան այցելելուց յետոյ Փոխարքան մտաւ և Սինոդ և միաբանների հետ Զուարթնոց աւերակներին այցելելուց յետոյ՝ մեկնեց դէպի Երևան։ Առհասարակ Կովկասի Տ. Փոխարքայի իւր շքախմբով տեսակցութիւնը Նորին Սրբութեան հետ շատ համակրական, սիրալիր և ուրախ տրամադրութեան ներքոյ էր։ Փոխարքան Ալէքսանդրապոլից ուղարկեց Վեհափառին հետևեալ շնորհակալական հեռագիրը։



ՓՈԽԱՐՔԱՅԻ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ.

Կրկին կնոջս հետ միասին յայտնում եմ Ձերդ Սրբութեան և միաբանութեան շնորհակալութիւն հիւրասէր և սիրալիր ընդունելութեան համար, որ ցոյց տուիք իմ ընտանիքիս։ Ցանկանում ենք առողջութիւն և յանձնում ենք Մեզ Ձեր սուրբ աղօթքներին։

Կոմս Վորոնցով-Դաշկով.